Զորակապ

Մակերես՝ 14.7կմ^2

Բնակչություն՝ 1158

dzorakap.shirak@mta.gov.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ԶՈՐԱԿԱՊ** ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ներկայիս անվանումը – Զորակապ
Համայնքի պատմական անվանումները-
Պողազքեսեն, Բողասքյասան, որը նշանակում է Զորաբերան կամԶորի նեղ բերան:
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը –Զորակապ գյուղը հիմնադրվել է 1827-1829 թվականներինԱրևմտյան Հայաստանի Բասենի և Կարսի գավառներից գաղթած ընտանիքների կողմից:
Որ համայնքներին է սահմանակից համայնքը –
Զորակապ գյուղը արևելյան մասով սահմանակից էՊեմզաշենին և Լեռնակերտին, հյուսիսային մասով Մարալիկ քաղաքին իսկ հարավային մասովՍառնաղբյուր և Լանջիկ գյուղերին:
Համայնքի մակերեսը –
Համայնքի վարչական տարածքը կազմում է 1415,66 հա, որից 1246,5 հագյուղատնտեսական նշանակության հողեր, որից 543,33 հա վարելահողեր, որից սեփականաշնորհված 452,15հա, 661,89հա արոտավայր մնացածը այլ հողատարածքներ, համայնքի կառուցապատված տարածքըկազմում է 75,66 հա:
Հեռավորությունը մայրաքաղաքից- հեռավորությունը մայրաքաղաք Երևանից- 90 կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից – Մարզկենտրոն Գյումրից 27 կմ, իսկ նախկին շրջկենտրոն Մարալիկից 1կմ:
Բնակչության թիվը – 1232 մարդ
Բնակչության կազմը – ընդ.1232 մարդ որից արական 442
, իգական790, առկա բնակչության թիվը 1094, մինչև1 տարեկան 13 որից 7 իգական 6 արական, 1-2 տարեկան 18 որից 9/9, 3-4 տարեկան 21 որից 13/8, 5-6տարեկան 37 որից 14/23
, մինչև 6 տարեկան 89 որից 43/46, 7-10 տարեկան 62 որից 27/35, 11-14 տարեկան 63որից 27/36, 15-17 տարեկան 43 որից 17/26, մինչև 16 տարեկան 229 որից 104/125, մինչև 18 տարեկան 257 որից114/143, 18-22 տարեկան 86 որից 38/48, 23-45 տարեկան 220 որից 120/100, 46-62 տարեկան 308 որից 190/118, 63 և ավել տարիքի 134 որից 74/60:
Համայնքի նշանավոր մարդիկ –
Համայնքը գիտության մշակույթի և արվեստի ոլորտներում տվել էնշանավոր մարդիկ՝Հրաչ Սաղաթելյան բժշկական գիտությունների թեկնածու /օնկոլոգ/,Հայկ Քամալյանբժշկական գիտությունների դոցենտ/սրտաբան/,Ազատ Ալեքսանի Սարգսյան Հ. Հ. Վաստակավորանասնաբույծ, Մաքսիմ Հրաչի Մուրադյան՝ մաթեմատիկական գիտությունների դոկտոր պռոֆեսոր, ԱրամՀրաչի Մուրադյան՝ մաթեմատիկական գիտությունների դոցենտ, Հակոբ Երվանդի Աղաբեկյան՝ թեթևարդյունաբերական գիտությունների թեկնածու: